



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

« 03 » « ցեկտեմբեր » 2020 թ. № 887-Ղ

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Նշանակել ծառայողական քննություն լիզենցիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Է. Փիրումյանի կողմից 2020 թվականի հոկտեմբերի 19-ին ներկայացված զեկուցագրի հիման վրա ներկայացված փաստերի դեպքով:

- Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցերն են՝
- 1) Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված փիզկերում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիաներ ունեցող լիցենզավորված անձանց ցանկում (կատարող՝ լիզենցիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչության պետական կադաստրների, ռեստորների վարման և մոնիթորինգի բաժնի ավագ մասնագետ Ա. Դավթյան) առկա անճշտությունների (59-րդ և 176-րդ կետեր) պատճառները:
 - 2) Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքի ղեկավարին 2020 թվականի հոկտեմբերի 15-ին ուղղված 2/10.1.6/11314 գրությամբ (կատարող՝ լիզենցիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչության ջրօգտագործման թույլտվությունների բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Տերտերյան), ներկայացված հիմքերով մերժման պատճառները:
 2. Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով՝
 - 1) Տիգրան Սիմոնյան – Նախարարի տեղակալ, խմբի ղեկավար,
 - 2) Գրիգոր Գուլյան – Գլխավոր քարտուղար,
 - 3) Խաչատուր Խաչատրյան – Իրավաբանական վարչության պետ,
 - 4) Մերի Բաբայան – Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պետ,
 - 5) Կարինե Քուշքյան – Քարտուղարության պետի տեղակալ:
 3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:
 4. Ծառայողական քննությունն անցկացվում է 15 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանն ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունն անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

12/3/2020

X 

ԳՐԻԳՈՐ ԳՈՒԼՅԱՆ

Signed by: GULYAN GRIGOR 3202780018

Գ. ԳՈՒԼՅԱՆ